

գաւորներն ու իշխաններն ունէր միշտ: Այս զանազանութեան անուշադրութենէ ծագած է այն լիակատար անմիաբանութիւնը մէկ կողմանէ մեր հին աղբերաց տուած «Վրաց», իշխանաց անուանց ու պատմութեան եւ միւս կողմանէ վրական աղբերաց տուած տեղեկութեանց միջեւ: Իրականին երկուքն ալ տարբեր տեղերու եւ տարբեր իշխանաց պատմութիւններ կ'աւանդեն: Բիւզանդեանք «Կիւրապաղատ», յորջորջանքը կու տային Տայոց-Կղարջաց այս իշխանաց: Արդ կրօնական վճիռերը՝ մանաւանդ Բաղկեզոնի ժողովոյն խնդիրը՝ ինչպէս անհատնում գժտութեանց առիթ եղան Յունաց եւ Հայոց միջեւ, եղան նաեւ պատճառ վիճմանց եւ պառակտման Հայ եւ վրական եկեղեցեաց: Տայոց-Կղարջաց Բազրատունիք, որոնք շուտով խնամութեան կապեր հաստատած էին ամիսաղեան, վրական եւնտանց հետ, երբեք չ'նոնալով տակաւին իրենց կապն Անուոյ Բազրատունեաց հետ, ի կրօնականին կողմնակից էին ինչպէս յունական՝ նոյնպէս ի մասնաւորի վրական եկեղեցւոյ: Այս ժամանակներէն արդէն (Թ.—Փ. դարուն) վրական եկեղեցին գերիշխող դիրք սկսած է ունենալ Տայոց մէջ ալ,